

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ աշխատակազմի լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը /այսուհիտ՝ Բաժին/ նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի /այսուհետ՝ Նախարար/ և Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

II ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝
 - ա) Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման

մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, կրթության և գիտության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում,

բ) լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման ապահովում, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ մոնիթորինգի իրականացում (**խմբ. 31.08.2015 757- Ա/Ք հրամանով**),

գ) **ենթակետը ուժը կորցրել է 31.08.2015 757- Ա/Ք հրամանով:**

դ) մասնագիտական կրթության համակարգում լրացուցիչ և շարունակական կրթության ներդրման աշխատանքների կազմակերպում և համակարգում (**խմբ. 31.08.2015 757- Ա/Ք հրամանով**),

ե) կրթության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակում,

զ) կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման մասնակցություն,

է) կրթության զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքների մասնակցություն,

ը) կրթության բնագավառ միջպետական համագործակցության ծրագրերի մշակման և դրանց իրականացման կազմակերպման մասնակցություն,

թ) կրթության զարգացման պետական ծրագրի մշակման և դրա իրականացման աշխատանքների մասնակցություն,

ժ) պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում կրթության ոլորտի ծրագրերի իրականացման կազմակերպման և մոնիթորինգի աշխատանքների մասնակցություն,

ժա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեգիստրների վարման մասնակցություն,

ժբ) Նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովման մասնակցություն,

ժգ) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգի, այդ բանագավառներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման մասնակցություն,

ժդ) Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

5. Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
6. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
7. Բաժնի պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:
8. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվով քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: